ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՁԱՏԱԳՈՎԸ

Յ. ՇԱՀԱՄԻՐԵԱՆ

(«ՈՐՈԴԱՅԹ ՓԱՌԱՅ»)

Գրեց՝ ԻՐԱՋԵԿ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ

Շահամիրեանը, ինչպէս ասացինք, աշխատում է նախատեսնել ապագայ Անկախ Հայաստանի հասարակական ամբողջ կեանքը եւ նրա բոլոր երեւոյթները կազմակերպել, համապատասխան օրէնքներ դնելով: Նրան առանձնապէս հետաքրքրում է ժողովրդի բարեկեցութիւնը, ուստի եւ նա իր գլխաւոր ուշադրութիւնը դարձնում է այդ առարկայի վրայ:

Նա գիտէ, որ ամէն մի հասարակութեան բարեկեցութեան առաջին հիմքը ուսումն է, լուսաւորութիւնը, որովհետեւ ուսման միջոցով հեշտանում է բարեկեցութեան հասնելու ճանապարհը, մանաւանդ այն ժամանակներում: Դրա համար էլ նա պահանջում է ամենից առաջ պարտադիր ուսում բոլոր երեխաների համար — տղայ եւ աղջիկ: Պահանջում է դպրոցներ — սկսած «ծայրագոյն» մայրաքաղաքից մինչեւ յետին «կրտսեր» գիւղը, որ ունի մինչեւ 25 տուն բնակչութիւն:

Ամենափոքրիկ դպրոցն անդամ պիտի ունենայ երկու ուսուցիչ կամ — ինչպէս ինքն է ասում — երկու «վարպետ». մէկը բոլոր տղաներին ու աղջիկներին ուսում տալու համար, «վասն ուսուցանելոյ մանկանց հայոց բառիւ եւ տառիւ ընթերցմունս». միւսը՝ միայն տղաներին «զինուորութեան արհեստը» սովորեցնելու համար (ճա):

Դպրոցական գործի ղեկավարութիւնը յանձնում է պետութեան, մասնաւորապէս նահանգի իշխանին, պարտաւորեցնելով նրան իր իշխանութեան սահմաններում դպրոցներ բանալ (շԺա) եւ պետական բիւդջէից որբ մանուկների ուսման ծախսերի համար 100,000 դահեկան յատկացնելով (միը): Մինչեւ իսկ ապօրէն երեխաների համար պետութիւնը իւրաքանչիւր նահանգում պահում է երկու դպրոց, մէկը տղայոց, իսկ միւսը աղջիկների համար, ուր նրանք սովորում են մինչեւ 12 տարեկան հասակը (ճԺը):

Այդ ամէնի հետ միասին՝ պետութիւնը խրախուսում է գիտութիւնը, արհեստները, օգնութեան գալով ինչպէս բոլոր արհեստաւորներին, այնպէս էլ գիտնականներին, որոնց թւում յատկապէս «փիլիսոփաներին, աստղաբաշխներին, բժիշկներին, երաժիշտներին, ճարտասաններին եւ այլն» (ճիէ):

Հասարակութեան բարեկեցութեան միւս ամենագլխաւոր հիմքը տնտեսականն է: Ահա թէ ինչո՞ւ Շահամիրեանը այնքան մեծ կարեւորութիւն է ընծայում Հայաստանի ազգաբնակութեան տնտեսական բարձրացմանը:

Գիտակցելով, որ Հայաստանը գերազանցօրէն գիւղատնտեսական երկիր է, ամենքից առաջ նա աշխատում է գիւղատնտեսութեան զարգացումն ապահովել մի շարք օրէնքներով: Նա պահանջում է, որ բոլոր հողերը — պետական, եկեղեցական, կալուածատիրական թէ մասնաւոր-սեփականատիրական — ժամանակին պարարտացուեն, մշակուեն եւ ցանուեն: Թէ՛ նահանգի իշխանը եւ թէ՛ մանաւանդ կերակրապետները պարտաւոր են հետեւելու, որ մի քայլ հող անմշակ, ամայի չմնայ: Անկարողներին եւ կարիքաւորներին նրանք պիտի օգնեն պետութեան բիւդջէից, որպէսզի կարողանան իրենց ցանքը գլուխ հանել (հ): Իսկ եթէ այդ բոլորից յետոյ այնուամենայնիւ մէկն ու մէկը ժամանակին չցանեց իր արտը կամ չտնկեց իր այգին, այդ դէպքում նրա հողը մշակում է պետութիւնը եւ եթէ 3 տարուան ընթացքում հողի տէրը դուրս չեկաւ իր հողին տէր կանգնելու, հողը ընդմիշտ մնում է պետութեանը (ճԹ, ճԺ):

Ժողովրդի տնտեսութեանը զարկ տալու նպատակով՝ հեղինակը բազմաթիւ օրէնքներով հովանաւորում է առեւտուրը, արհեստ-